

*Վերադարձված է Գրադատության  
ստորագրության, հարցազրույցի մասնակցի  
Վարչության  
ՄԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ*

7-80

ԳՈՂԱՐ ՄԱՆՎԵԼԻ ԻՍԿԱՆԳԱՐՅԱՆ

ԻՐԱՆԱ - ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1942 - 1960 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է. 00.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2003

Ատենախառության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գլխավոր հեղինակ

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆ. Վ.Ա.Բայբուրդյան

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ.  
Վ.Ա.Գիլոյան  
պատմական գիտությունների քեկնածու՝  
Ա.Գ.Ստամբուլյան

Առաջատար կազմակերպություն

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2003թ. սեպտեմբերի 25-ին ժ. 14-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր աստիճաններ շնորհող 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղդասյան պող., 24գ):

Ատենախառությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2003 օգոստոսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի  
գլխավոր քարտուղար՝ պ.գ.ք

 Պ.Ա.Չոբանյան

ԹԵՍԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-60թթ. ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական և գործնական նշանակություն:

Իրանը՝ իր աշխարհաքաղաքական դիրքի, մարդկային և բնական ռեսուրսների շնորհիվ պատմության նոր ժամանակներից սկսած գտնվել է եզր տերությունների հետաքրքրությունների ոլորտում: Իրանի տարածքով են անցնում Եվրոպան, Ասիան և Աֆրիկան իրար կապող ծովային, օդային և ցամաքային հաղորդակցության կարևորագույն ուղիներ:

Իրանի նորագույն պատմության այս ժամանակահատվածում նկատելի է Միացյալ Նահանգների զգալի ազդեցությունը, որն իր հետքը թողեց Իրանի, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ձևավորման և զարգացման վրա:

Այդ ազդեցությունը հատկապես նկատելի դարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ աշխարհում տեղի ունեցավ շահերի և ազդեցության ոլորտների վերաբաժանում ու նախկին դաշնակից պետությունները վերածվեցին մրցակիցների: Այս պայմաններում մերձավորարևելյան գրեթե բոլոր պետությունները դեռ խիստ կարևորվեցին:

Ատենախառության նպատակն է ցույց տալ, թե ինչ ճանապարհներով էր Միացյալ Նահանգները ազդեցության լծակներ ձեռք բերում Իրանում, քանի որ մինչև Երկրորդ աշխարհամարտը այդ երկրում և ընդհանրապես տարածաշրջանում չուներ իրական ազդեցություն, իսկ Իրանի հետ՝ որևէ լուրջ պայմանագիր:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, «Գեո-լիգ» ծրագիրն իրականացնելու նպատակով ԱՄՆ-ը մոտ 30.000-ոց բանակ մտցրին Իրան: Պատերազմից հետո իրանական Այրբեջանի (Ատրպատականի) խնդրի լուծման գործում, զգալի ներդրում ունեցավ Միացյալ Նահանգները: 1941թ. երիտասարդ շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին արտահայտեց իր ձգտումը ԱՄՆ-ի հետ տնտեսական և քաղաքական անուր հարաբերություններ հաստատելու մասին: Միացյալ Նահանգների օգնությամբ նա հույս ուներ չեզոքացնել մյուս տերությունների ազդեցությունը և ամրապնդել իր իշխանությունը:

Միացյալ Նահանգները դիմում էր դիվանագիտական գրեթե բոլոր միջոցներին. նպատակներ էր հատկացնում կրթական, հասարակական բնագավառների զարգացմանը, հանդես էր գալիս «մարդասիրական», ինչպես նաև տնտեսական, ռազմական, տեխնիկական օգնություններով: Անհրաժեշտության դեպքում անմիջականորեն միջամտում էր նաև Իրանի ներքին գործերին՝ դրա համար չխնայելով ոչ մի միջոց:

Հարկ է նշել, որ այդ ժամանակից ի վեր ԱՄՆ-ը ուշիուշով հետևում և մասնակից էր դառնում տարածաշրջանում, մասնավորապես Իրանում ծագած յուրաքանչյուր խնդրի:

Հայտնի է, որ երբեմնի քարեկան երկու պետությունների՝ Իրանի և ԱՄՆ-ի հարաբերությունները 1980թ. խզվեցին: Դրա համար կային ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ, որոնց արմատները ձգվում են մինչև 20-րդ դարի կեսերը: Աշխատության նպատակն է անդրադառնալ սույն խնդրին և ցույց տալ, թե ինչպիսի զարգացումներ տեղի ունեցան

Իրանում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, և որ ամենակարևորն է, ինչպես դրանք անդրադարձան Իրանի՝ արդի շրջանի պատմության և քաղաքականության հետագա զարգացման վրա:

1980 թվականից ի վեր բազմաթիվ փորձեր արվեցին՝ վերականգնելու երբեմնի սերտ հարաբերությունները երկու երկրների միջև, սակայն դրանք բոլորն էլ անհաջողության մատնվեցին: Միայն 1990-ականների վերջերին Թեհրան-Վաշինգտոն փոխադարձաբարություններում նկատվեցին որոշ շփումներ, սակայն դրանք չհանգեցրին որևէ դրական արդյունքի: Հարաբերություններն առավել լարվեցին հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, երբ ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Ջորջ Բուշը փնտրելով ռդքերզության կազմակերպիչներին՝ 2002թ. հունվարի 30-ին, Կոնգրեսի համատեղ նիստի ժամանակ, մեղադրեց Իրաքին, Իրանի Իսլամական Հանրապետությանը և Հյուսիսային Կորեային՝ կոչելով նրանց «չարիքի առանցքի երկրներ»:

Նախագահ Բուշի հայտարարությունները գնահատելով անհիմն և որոշակի քաղաքական նպատակներ հետապնդող՝ Իրանը ԱՄՆ-ից պահանջեց մեղադրանքների առնչությամբ փաստեր ներկայացնել:

Ներկա իրողությունների համատեքստում աշխատանքը արդիական հնչողություն ունի:

#### *ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ատենախոսության նպատակն է վերլուծել իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960թթ., որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Բացահայտել Իրանում՝ ԱՄՆ-ի վարած քաղաքականության առանձնահատկությունները պատերազմի ժամանակ:
- Ներկայացնել ԱՄՆ-ի վարած ակտիվ քաղաքականությունն Ատրպատականում 1945-46թթ.:
- Բացահայտել անգլո-իրանական նավթային վեճի ժամանակ Միացյալ Նահանգների քաղաքական դիրքորոշումը:
- Նոր տվյալների և աղբյուրների հիման վրա ներկայացնել 1953թ. Իրանում ԱՄՆ-ի կողմից իրականացրած «Այաքս» գաղտնի գործողությունը:
- Պարզաբանել Միացյալ Նահանգների օգնության ծրագրի կիրառումը իր քաղաքականությունն իրականացնելիս:
- Բացահայտել ԱՄՆ-ի ունեցած ազդեցությունը Իրանի ներքին ու արտաքին քաղաքականության ձևավորման վրա:

#### *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ*

Ատենախոսության թեման այս տեսանկյունից առաջին անգամ է դառնում հատուկ ուսումնասիրության առարկա: Խոսքերային շրջանում բավականին աշխատություններ են

հրատարակվել Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ-ի վարած քաղաքականության վերաբերյալ, սակայն հասկանալի պատճառներով այդ աշխատություններում տեղ չեն գտել նշանակալի մի շարք իրադարձությունների վերլուծություններ, որոնք տրված են մեր աշխատությունում՝ ամերիկյան, անգլիական, իրանական աղբյուրների և մամուլից ստացած նոր տեղեկություններով: Իրանա-ամերիկյան հարաբերությունների մասին շատ փաստեր միայն այսօր են բացահայտվում, և դրանք հնարավորություն են տալիս առավել լիարժեք պատկերացում կազմելու երբեմնի «քարեկամ» երկու երկրների հարաբերությունների մասին: Թեման կարևոր է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե՛ քաղաքական, և թե՛ գիտական առումներով: Կարծում ենք, որ դրանք ուսումնասիրելով՝ շատ հարցեր առավել պարզ են դառնում, մանավանդ, որ այսօր էլ համաշխարհային հանրության ուշադրությունը սևեղված է Մերձավոր և Միջին Արևելքի վրա: Բացի այդ, մեզ համար խիստ կարևոր է և այն, որ Հայաստանը մտնում է հիշյալ տարածաշրջանի մեջ, սահմանակցում է Իրանին և նրա հետ ունի սերտ հարաբերություններ:

#### *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ*

Աշխատությունն ընդգրկում է 1942 թվականից մինչև 1960 թվականը: Ժամանակագրական մնան մոտեցումը բացատրվում է նրանով, որ Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո աշխարհում տեղի ունեցավ ուժերի վերադասավորում, որն առավել ակնհայտ դարձավ հատկապես հետպատերազմյան շրջանում: Մա, կարելի է ասել, իրանա-ամերիկյան հարաբերությունների ակտիվ ձևավորման շրջանն էր: Թեման հասցվում է մինչև 1960-ական թվականների սկիզբը՝ մինչև «Սպիտակ հեղափոխություն», որից հետո նկատվում են իրանա-ամերիկյան հարաբերությունների գարգացման նոր միտումներ:

#### *ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ*

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված է 1942-1960թթ. իրանա-ամերիկյան հարաբերությունների քննարկումը, տարածաշրջանային իրադարձությունների հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության և փաստերի համեմատական վերլուծության սկզբունքները:

#### *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Գործնական առումով թեման կարևոր է հասկանալու գերհզոր մի պետության՝ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Իրանի նկատմամբ: Աշխատանքի նյութերը և տվյալները կարող են օգտագործվել 20-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը և ինչպես Իրանի, այնպես էլ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմությանը նվիրված հատուկ դասընթացներում: Աշխատության եզրահանգումները կարող են օգտակար լինել պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելիս:

Ատենախառնությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնում: Ատենախառնության հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում և թեզերում՝ Երիտասարդ արևելագետների հանրապետական XXI, XXII, XXIII, XXIV, ինչպես նաև Թեհրանում Իրանագիտական առաջին ազգային կոնգրեսում ընթերցված գեկուցումներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համեմատական և աղբյուրագիտական վերլուծության ժամանակ օգտագործվել են տարաբնույթ սկզբնաղբյուրներ. 1942թ. հունվարի 29-ի եռակողմ պայմանագիրը, 1943թ. Թեհրանի հռչակագիրը, Միացյալ Նահանգների Սենատի, Լոնդոնի Մտրատեգիական հետազոտությունների ինստիտուտի փաստաթղթերը, Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փահլավիի ելույթները և աշխատությունները, սակայն աշխատությունների մեջ հաճախ հանդիպում ենք իրար հակասող իրադրությունների, արքայադուստր Աշրաֆ Փահլավիի, ԿՀՎ-ի գործակալ Ք. Ռուզվելտի, ԿՀՎ-ի նախկին տնօրեն Ա.Դավեսի, Անգլիայի վարչապետ Է.Իդենի, Իրանի վարչապետ Մ.Մոսադեհի, 1945-46թթ. Թավրիզում ԱՄՆ-ի հյուպատոսարանի գործերի հավատարմատար Ռ.Ռոստոմի աշխատությունները<sup>1</sup>, ԽՍՀՄ կառավարության նոտաներն ուղղված Իրանին և ԱՄՆ-ին, ԽՍՀՄ-ի մի շարք պաշտոնական հայտարարություններ և հաշվազներ:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ փաստական մեծ նյութեր են պարունակում այնպիսի պարբերականներ, ինչպիսիք են «Նյու Յորք Թայմս», «Նյու Յորք Թայմս Մազդզին», «Նյու Յորք Փոսթ», «Նյու Յորք Հերալդ Թրիբյուն», «Նյուզվիկ», «Էքոնոմիստ», աֆղանական «Զարուլ Թայմս», պարսկական մամուլից՝ «Էթթեխաթ», «Քեյհան», «Մուրմալ ին Թեհրան», ռուսական մամուլից՝ «Պրավդա», «Իզվեստիա» թերթերը և այլն:

Արդեն կես դարից ավելի իրանա-ամերիկյան հարաբերությունները գտնվում են պատմաբանների, միջազգայնագետների և համաշխարհային հասարակայնության ուշադրության կենտրոնում: Իրանա-ամերիկյան հարաբերությունների պատմությանը նվիրվել են բազմաթիվ միջազգային խորհրդաժողովներ, կոնգրեսներ, գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ և

<sup>1</sup> The Tri-Partite Treaty of Alliance, January 29, 1942. The Tehran Declaration, December 1, 1943. (St'u Millspaugh Arthur C., Americans in Persia, New York, 1976.) An Interim Report of the Select Committee to Study Governmental Operations with Respect to Intelligence Activities. United States Senate, Washington, 1975. Final Report of the Select Committee to Study Governmental Operations with Respect to Intelligence Activities. United States Senate, Washington, 1976. The Military Balance 1991-1992, 1992-1993, HISS, London. Ն.Կ.Մ. Մոհամմադ Ռեզա Շահ Փահլավի, Առաքելություն հայրենիքիս համար, Թեհրան, 1973: Pahlavi Mohammad Reza, The Shah of Iran, Answer to History, New York, 1980. Pahlavi Mohammad-Reza, Twelve Speeches by His Imperial Majesty Mohammad-Reza Pahlavi Aryamehr, Shahanshah of Iran on Ideological Basis of Iran's National and International Policy, Tehran, 1971. Pahlavi Ashraf. Faces in a Mirrors, Memoirs from Exile. New York, 1980. Roosevelt Kermit, Counter coup: The Struggle for the Control of Iran, New York, 1979. Dulles Allen W., The Craft of Intelligence, New York, 1963. Eden A., The Memoirs of Sir Anthony Eden, London, 1960. Robert Rossow, Jr., The Battle of Azerbaijan, 1946. (St'u The Middle East Journal, 1956).

աշխատություններ: Այդ առումով օգտագործված մասնագիտական գրականությունը կարելի է բաժանել՝ հայկական, ռուսական (խորհրդային), անգլո-ամերիկյան և իրանական բաժինների:

Հարցի ուսումնասիրման գործում մեծ ներդրում ունեն նշանավոր հայ արևելագետներ, որոնց աշխատություններում ուսումնասիրության առարկա է դարձել ԱՄՆ-ի և Իրանի փոխհարաբերությունները, ինչպես նաև Միացյալ Նահանգների վարած քաղաքականությունը Մերձավոր ու Միջին Արևելքի բոլոր երկրներում: Այս առումով մեծ կարևորություն է ներկայացնում Ս.Ս.Ավանեսովի՝ «Մերձավոր և Միջին Արևելքում բրյկներ ստեղծելու հարցի շուրջ (1953-1958)»<sup>2</sup>, Հ.Մ.Եզանյանի, «Հոգևորականության դերը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում»<sup>3</sup>, Հ.Կ.Թրյանի՝ «Պայքար նավթի համար»<sup>4</sup>, Վ.Բայբուրյանի՝ «Իրանն այսօր»<sup>5</sup>, Ն.Հովհաննիսյանի՝ «Արաբական Արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին», ինչպես նաև նույն հեղինակի «Իրանը Մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-1992թթ.)»<sup>6</sup>, Ա.Ստամբոլյանի՝ «Իրանի ազգային բուրժուազիայի կառավարության ներքին քաղաքականությունը (1951-1953թթ)»<sup>7</sup>:

Բնականաբար սույն հարցը եղել է մնում է ռուս պատմաբանների և արևելագետների համակ ուշադրության ներքո: Ուշադրության են արժանի Ռուսաստանի խաշոր արևելագետ Ա.Չ.Արաբաջյանի և Չ.Ա.Արաբաջյանի աշխատությունները<sup>8</sup>, Ա.Գրոմիկոյի՝ «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը»<sup>9</sup>, Ե.Ա.Օբլովի՝ «Իրանի արտաքին քաղաքականությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո»<sup>10</sup>, որտեղ, չնայած միակողմանի մոտեցմանը, հեղինակը ամենայն մանրամասնությամբ ներկայացվում է Իրանի արտաքին քաղաքական կուրսը: Արժեքավոր աշխատություններ են կատարել Գ.Դ.Ալիբեյլին, որը ներկայացրել է Իրանի և հարևան երկրների փոխհարաբերությունները և զերհզոր տերությունների ազդեցությունը այդ հարաբերությունների վրա, Ռ.Բոռոնովը, Մ.Վ.Պոպովը, Օ.Ե.Տուգանովան, Վ.Ա.Կրեմնյուկը, Մ.Լ.Ալակը, Ն.Մ.Սամեդովան, Ի.Վ.Սամիլովսկին և այլք<sup>11</sup>:

Ուսումնասիրվող հարցը հետազոտության առարկա է դարձել նաև ԱՄՆ-ի, Անգլիայի և Իրանի պատմաբանների, արևելագետների և միջազգայնագետների կողմից: Ուշադրության

<sup>2</sup> Ավանեսով Ս.Ս., Մերձավոր և Միջին Արևելքում բրյկներ ստեղծելու հարցի շուրջ (1953-1958), Արևելագիտական ժողովածու, N1, Երևան 1960.  
<sup>3</sup> Եզանյան Հ.Մ., Հոգևորականության դերը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում, Երևան 1987:  
<sup>4</sup> Թրյան Հ.Կ., Պայքար նավթի համար, Երևան, 1957:  
<sup>5</sup> Բայբուրյան Վ. Իրանն այսօր, Երևան, 1999:  
<sup>6</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական Արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, և. 9, Երևան 1978: Հովհաննիսյան Ն., Իրանը Մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-1992թթ.), Իրան Նամ, Երևան, 1993:  
<sup>7</sup> Ստամբոլյան Ա., Իրանի ազգային բուրժուազիայի կառավարության ներքին քաղաքականությունը (1951-1953թթ) Երևան, 1984.  
<sup>8</sup> Արաբաջյան Ա.Յ., Экономическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), М., 1960. Арабаджян А.З., Иран: изменения в отраслевой структуре экономики в 60-70 годах, М., 1983. Арабаджян А.З., Иран: ислам и власть, М., 2001. Арабаджян З.А., Иран власть, реформы, революции (XIX-XXвв.), М., 1991. Арабаджян З.А., Давление США на СССР и Достижение договоренностей о выводе советских войск ис Ирана после Второй Мировой войны, Иран: ислам и власть, М., 2001.  
<sup>9</sup> Громикин А., СССР-и արտաքին քաղաքականությունը: Դասեր և իրավունքներ: 60-70-ական թվականներ, Երևան, 1981:  
<sup>10</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, М., 1975.  
<sup>11</sup> Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока 1946-1978, М., 1989. Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, М., 1977. Попова М.В., Американский империализм в Иране в годы Второй Мировой Войны, М., 1956. Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960. Кременюк В.А., Политика США в развивающихся странах. Проблемы конфликтных ситуаций 1945-1976, М., 1977. Кременюк В.А., Борьба Вашингтона против революции в Иране, М., 1984. Мамедова Н. М., Иран в XX веке роль государства в экономическом развитии, Москва, 1997. Самыловский И.В., Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке, М., 1955.

արժանի է Ե.Աբրահամյանի «Իրանը երկու հեղափոխությունների միջև»<sup>12</sup> աշխատությունը, որտեղ հեղինակը ամենայն մանրամասնորեն անդրադառնում է Իրանի ներքին և արտաքին խնդիրներին սկսած 19-րդ դարի վերջից մինչև 1979թ. Իսլամական հեղափոխությունը: Ուշադրության է արժանի հայտնի պատմաբան Ջ.Էնթոնիսի, Դ.Վիլքերի, Փ.Ալվերի, Ա.Միլայոյի, Ջ.Բիլլի<sup>13</sup> և այլոց աշխատությունները: Հիշատակության է արժանի նաև իրանցի քաղաքական գործիչների հուշերը և պատմաբանների աշխատությունները: Հատկապես հիշարժան է 1951-53թթ. Իրանի վարչապետ Մահմադ Մոսադեղի հուշերը<sup>14</sup>, Արդաբեզա Հուշնագ Մահյուի «Իրանի արտաքին քաղաքականությունը Փահլավիների օրոք»<sup>15</sup>, որտեղ հեղինակը մանրամասն նկարագրում է հատկապես Ատրպատականում և Քրաստանում տեղի ունեցող իրադարձությունները: Ուշադրության է արժանի Ալեոզա Ազրանդի «Իրանի արտաքին քաղաքականությունը 1941-1978»<sup>16</sup>, որտեղ հեղինակը չլեզծելով փաստերը անդրադառնում է նաև ամերիկյան օգնություններին, Մանուշեիր Ֆարմանֆարմայանի «Արյուն և նավթ»<sup>17</sup> Դրամոնեզա Նեջաբի «Իրանի 25 տարվա քաղաքական պատմություն»<sup>18</sup> աշխատությունները և այլն: Նրանցից շատերը եղել են բոլոր իրադարձությունների ակնմատեսներ և արձանագրել են այդ փաստերը: Մակայն հասկանալի է, որ այսօր Թեհրանում լույս տեսած նման գրականությունը հիմնականում միակողմանի ուղղվածություն ունի:

*ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Ատեմախտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ՆԵՐԱՇՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը, պարզաբանվում են աշխատանքի մեթոդական հիմքը և գիտական նորությունը:

Աշխատության առաջին գլխում, որի վերնագիրն է՝ ԻՐԱՆ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1942-1950թթ. ներկայացվում է ոչ միայն հիշյալ ժամանակաշրջանը այլ նաև հարցի պատմագրությունը:

Եթե 18-19-րդ դարերում Իրանն իրենց հսկողության տակ պահելու համար պայքարում էին Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ապա 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նրանց շարքերը համալրեց նաև Գերմանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները:

<sup>12</sup> Abrahamian E., Iran Between Two Revolutions, Princeton, New Jersey, 1983.  
<sup>13</sup> James Bill A., The Eagle and the Lion. The Tragedy of American-Iranian Relations, London, 1988. Lenczowski George, Iran Under The Pahlavis, California, 1978. Lenczowski George, American Presidents and The Middle East, London, 1990. Lenczowski G., The Middle East in World Affairs, New York, 1956. Millsbaugh Arthur C., Americans in Persia, New York, 1976. Wilber Donald N., Iran: Past and Present, Princeton, New Jersey, 1950. Avery Peter, Modern Iran, London, 1965.  
<sup>14</sup> خاطرات و تالعات دکتر محمد مصدق، بقلم دکتر محمد مصدق.  
<sup>15</sup> عبدالرضا هوشنگ مهدوی، سیاست خارجی ایران در دوران پهلوی ۱۳۰۰-۱۳۵۷، تهران، ۱۳۷۵.  
<sup>16</sup> علیرضا ازغندی، روابط خارجی ایران (دولت دست نشانده) ۱۳۵۷-۱۳۲۰، تهران، ۱۳۷۶.  
<sup>17</sup> منوچهر فرمانفرمایان و رحسان فرمانفرمایان، خون و نفت، خاطرات یک شاهزاده ایران، تهران، ۱۳۷۸.  
<sup>18</sup> غلامرضا نجاتی، تاریخ سیاسی بیست و پنج ساله ایران، تهران، ۱۳۷۹.

Իրանի և նրա հարևան երկրների մասին առավել շատ տեղեկություն ունենալու ակնկալիքով, 1830թ. հունվարին արտասահմանյան առաքելությունների ամերիկյան բյուրոն, Իրան ուղարկեց բրիտանացիներից երկու քարոզիչների: Նրանք պետք է մանրամասն տեղեկություններ հավաքեին Իրանի, Քյոստանի, ինչպես նաև Հայաստանի մասին:

1883թ. փետրվարին ԱՄՆ-ի պետդեսպարտամենտը առաջին անգամ Իրան ուղարկեց իր ամենավերջին ողբերգիկ անցյալի ակնմատեսական ներկայացուցչին՝ Բենջամինին: Մեկ տարի անց Բուշեհրում հիմնվեց ամերիկյան առաջին կուսակառուցությունը:

ԱՄՆ-ի հետաքրքրությունն Իրանի նկատմամբ ավելի մեծացավ, երբ պարզվեց, որ երկիրը հարուստ է բնական հանածոներով՝ հատկապես նավթով: Վաշինգտոնի վարած քաղաքականությունը ուղղված էր տարածաշրջանում անգլո-ռուսական ազդեցության բուլազմանը: Ամերիկացիները փորձում էին ցույց տալ, որ իրենց երկիրը չի միջամտում Իրանի ներքին գործերին և ջանում է օգնել Իրանին՝ կարևոր տեղ զբաղեցնելու զարգացած պետությունների շարքում:

Իրանում բացվեցին բազմաթիվ ամերիկյան տիպի դպրոցներ և ուսումնական այլ հաստատություններ, հետագայում դեկավար պաշտոններ գրաված անձանցից շատերը կրթությունը ստացել էին հենց այս դպրոցներում:

Ատեմախտության առաջին գլուխը բաժանված է երեք ենթաբաժինների: Առաջին գլխի առաջին ենթագլուխը վերնագրված է «Իրան-ամերիկյան հարաբերությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և հետպատերազմյան առաջին տարիներին», որտեղ նկատվում է երկու երկրների փոխհարաբերությունների սերտացման միտումներ, որը հիմնականում արտահայտվում էր Իրանի սնանկացած կառավարությանն օգնության տրամադրմամբ:

Երկրին «օգնելու» պատրվակով Իրան ժամանեցին մի շարք խորհրդականներ: Բացի ֆինանսական և տնտեսական օգնություններից, ԱՄՆ-ը հոգ տարավ, որպեսզի Իրանի կառավարության բարձրագույն պաշտոններում տեսնեն ամերիկյան քաղաքացիներին, որոնք էլ, բնականաբար, կպաշտպանեին ԱՄՆ-ի շահերն Իրանում: 1942թ. աշնանը Իրանին օգնելու նպատակով ԱՄՆ-ը կազմակերպեց ևս երկու առաքելություն. 1. ռազմական՝ իրանական բանակը վերակազմելու և 2. ոստիկանական՝ իրանական ժամդարմերիային օգնություն ցույց տալու նպատակով: 1943թ. մարտին Մեջլիսը որոշում ընդունեց 4,5 մլն դոլարի օգնության խնդրանքով դիմել Միացյալ Նահանգներին՝ գործի և ժամդարմերիայի համար անհրաժեշտ զենք և զինամթերք զննելու նպատակով:

Ամերիկացիների գործունեության հիմնական ուղղություններից մեկը երկրում ռազմական ուժերի նկատմամբ ունեցած վերահսկողությունն էր, որը կարող էին օգտագործել և՛ կառավարության վրա ուղղակի ճնշում գործադրելու և՛ իրանական բանակի՝ որպես պոտենցիալ դաշնակցի մարտունակությունը բարձրացնելու համար:

1943թ. ապրիլի 8-ին Ղավամի օս-Մալթանի ջանքերով Վաշինգտոնում ստորագրվեց իրան-ամերիկյան առևտրական պայմանագիր: Այն մախատեսում էր բարենպաստ պայմաններ ստեղծել և թեթևացնել մաքսատուրքերի զանգվածային չափերը ամերիկյան ապրանքների ներկրման և իրանական ապրանքների՝ Միացյալ Նահանգներ արտահանման համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, ԱՄՆ-ի ղեկավար շրջանակներում այնքան մեծացավ հետաքրքրությունը Իրանի նկատմամբ, որ նույնիսկ սակավաթիվի պետքարտուղար Կորդել Հելլը հետազոտում գրեց, որ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից և ոչ մեկն այդքան չէր գրավում ԱՄՆ-ի ղեկավար շրջանների ուշադրությունը, որքան Իրանը»:

Միացյալ Նահանգների ազդեցության համար բարերար հող դարձավ այն, որ պատերազմից հետո Իրանի տնտեսական վիճակը կտրուկ վատացավ, և կրճատվեցին երկրում արտադրության չափերը:

Երբ, Թրումենի դիկտիրինով նախատեսվում էր ռազմական և տնտեսական օգնություն ցուցաբերել Հունաստանին և Թուրքիային, որոշվեց Իրանին նույնպես անմասն չթողնել, սակայն վերջիններս համենատ Իրանին տրամադրված օգնությունը չնչին էր:

Երկրորդ ենթաբաժինը, վերնագրված է «*Իրանական Աղբյուրների (Ատրպատականի) խնդիրը և Միացյալ Նահանգների մոտեցումը*»: Այստեղ հիմնական շեշտը դրվում է Ատրպատականի շուրջ ծավալվող գործադրությունների վրա:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Խորհրդային Միության բանակը հյուսիսից, իսկ անգլիականը հարավից մտան Իրանի տարածք: 1942թ. կնքած պայմանագրի համաձայն պատերազմի ավարտից վեց ամիս հետո նրանք խոստանում էին տարհանել իրենց զորքերը: Իրանում էր գտնվում նաև ամերիկյան բանակը, որը զբաղված էր «լեռն-լիզ» ծրագրի իրականացմամբ: Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ը և Անգլիան տարհանեցին իրենց զորքերը, իսկ Խորհրդային Միությունը չչտակեց հեռանալ դաշնակիցներին: Ավելին, ԽՍՀՄ-ի անմիջական աջակցությամբ Իրանում ստեղծվեցին Ատրպատականի և Քրդստանի ինքնավար կառավարությունները: Այս պայքարի ընթացքում առավել ակտիվ էր Միացյալ Նահանգները, քան Անգլիան: Միացյալ Թագավորությունը Իրանին նույնիսկ դրոշմ էր ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում գնալ զիջումներին: Անգլիայի դեսպան Ռիդեր Բուլլարդը նույնիսկ հիշեցրեց Իրանի կառավարության 1907թ-ի հնացած և երբեք կյանքի չկոչված՝ նահանգային խորհուրդների մասին օրենքը, որը նահանգներին որոշ չափով ինքնավարություն էր տալիս և այս պարագայում կարող էր հիմք հանդիսանալ իրավիճակը հյուսիսարևմտյան այս նահանգում կարգավորելու համար: Անգլիայի նման քաղաքականության հիմքում ընկած էր այն մտահոգությունը, որ եթե Իրանը չզիջի Խորհրդային Միությանը հյուսիսում, կարող են խաղաղվել նաև Անգլիայի դիրքերը հարավում: Ամերիկացիները նման մտահոգություն չունեին:

ԱՄՆ-ի ակտիվությունը այս հարցում այնքան մեծացավ, որ երբ Իրանի կառավարությունը տատանվում էր բողոք ներկայացնել Անվտանգության խորհուրդին, Միացյալ Նահանգները Իրանի կառավարությանը հղած նոտայով պահանջեց 24 ժամվա ընթացքում որոշում կայացնել «իրանական հարցը» Անվտանգության խորհրդում բարձրացնելու կապակցությամբ՝ սպառնալով, որ այլապես ամերիկյան կառավարությունը ինքը կպահանջի այդ հարցն ընդգրկել Անվտանգության խորհրդի օրակարգում:

Տվյալ պահի ծանր իրավիճակից դուրս գալու համար Իրանի վարչապետ Ղափան օս-Մալքանեն, որը տիրապետում էր դիվանագիտություն բարձրագույն արվեստին, 1946թ. փետրվարի 18-ին այցելեց Մոսկվա՝ բանակցելու «իրանական հարցի» շուրջ: Ղափանը ԽՍՀՄ-ի բարձրաստիճան ղեկավարներին հավաստիացրեց, որ խորհրդային ուժերը Իրանից տարհանելու

պարագայում կարժանանան մի շարք մեծաշնորհներին: Դրանց թվում՝ Իրանի և Խորհրդային Միության համատեղ նավթային ընկերության ստեղծում, որը պիտի ստանձներ Իրանի հյուսիսային շրջանի նավթի հետազոտման և արդյունահանման իրավունքը, կաբինետում ընդգրկել «Թուրք» կուսակցության անդամներին, պաշտոնապես ճանաչել Աղբյուրանի (Ատրպատականի) Հանրապետությանը և ՄԱԿ-ից հետ վերցնել Իրանի կողմից տրված բողոքը: Սա համապատասխանում էր Խորհրդային Միության ցանկություններին, և վերջինս սկսեց առավել զուսպ քաղաքականություն իրականացնել Իրանում:

Հետաքրքրության է արժանի այն փաստը, որ ԱՄՆ-ը վերտիկալ հարցի ժամանակ դիմեց աղղակի սպառնալիքների՝ օգտագործել ստոմային զենք: Համաձայն սենատոր Հեյնրի Ջեկսոնին հուշերի՝ Թրումենը Մայիսակ տուն էր հրավիրել Խորհրդային միության դեսպան Ա.Ա.Գրոմիկոյին և հայտարարել, որ եթե խորհրդային զորքերը անհավաղ չհեռանան Իրանից, ապա ԱՄՆ-ը ստոմային զենք կօգտագործի:

Միացյալ Նահանգները, հասնելով Իրանից խորհրդային զորքերի դուրսբերմանը, հաջողությամբ համարում էր խոչընդոտել իրանա-խորհրդային համատեղ նավթային ընկերության ստեղծմանը: ԱՄՆ-ի պետքարտուղար Մարշալը հայտարարեց, որ երաշխավորում է Միացյալ Նահանգների լիակատար աջակցությունը Իրանին՝ ԽՍՀՄ-ին նավթային կոնցեսիա չընդրելու պատճառով առաջացած անբարենպաստ հետևանքների դեպքում:

Ահա այսպիսի պայմաններում էլ բարձրացավ ԱՄՆ-ի վարկանիշը Իրանի ժողովրդի և կառավարող շրջանակներում, քանզի Խորհրդային Միությունը Իրանին վտանգ էր ներկայացնում, Անգլիան վարկաբեկված էր 150 տարվա վարած իր քաղաքականության պատճառով, իսկ Միացյալ Նահանգների կողմից դեռևս ոչ մի վատ բան չէր նկատվել: Ավելին, իրանական Աղբյուրանի խնդրի ժամանակ ԱՄՆ-ը Իրանին ցուցաբերեց զգալի աջակցություն:

Երրորդ ենթաբաժինը վերնագրված է «*ԱՄՆ-ի դիրքորոշումը Իրանի և Աֆղանստանի միջև առաջացած ջրի խնդրի կապակցությամբ*»: Այն նվիրված է Մերձավոր և Միջին Արևելքին մինչև օրս էլ բնորոշ ջրի հիմնախնդրին: Այս պարագայում անդրադարձել ենք Իրանի և Աֆղանստանի միջև Հիլմենդ գետի ջրի բաժանման համար առաջացած խնդրի լուծման ժամանակ ԱՄՆ-ի դիրքորոշմանը:

Ամերիկյան հայտնի «Մոբիսոն-Նադան» կորպորացիան Աֆղանստանի տարածքում՝ Հիլմենդ գետի շրջակայքում կառուցում էր ամբարտակներ և ռոտգիլ ջրանցքներ: Իրանը պահանջում էր դադարեցնել ամբարտակների շինարարությունը մինչև խնդրի լուծումը, քանզի ենթադրում էր, որ ջրամբարտակների կառուցմամբ Իրանին հասանելիք ջրի ծավալները կկրճատվեն: 1947թ. հոկտեմբերին ՄԱԿ-ում Իրանի մշտական ներկայացուցիչ Նասրուլահ Էնթեզամը իր կառավարության հանձնարարությամբ պետք է տեղյակ պահեր Անվտանգության խորհուրդին, որ Միսթանի շրջանում Իրանի և Աֆղանստանի բնակիչների միջև հաճախակի են դարձել վեճերը՝ յուրաքանչյուր կողմին գետից հասանելիք ջրի մասնաբաժնի անորոշության պատճառով, և որ այդ վեճերը սպառնում են խաթարել խաղաղությունը երկու երկրների միջև: Մակայն Միացյալ Նահանգների դիվանագիտական ճնշմամբ Իրանի կառավարությունը հրաժարվեց նախատեսված ծրագրից: Շուտով Միացյալ Նահանգները առաջարկեց իր միջնորդական առաքելությունը խնդրի լուծման համար: Մակայն սույն խնդրի լուծման եզրերը

նկատվեց միայն 1970-ական թվականներին՝ Իրանի և Աֆղանստանի փոխզդեցությունների շնորհիվ, որից հետո երկու երկրները շարունակեցին իրենց բարիդրացիական հարաբերությունները:

Ատենախոսության եզրույթը գլուխը՝ ԻՐԱՆ-ԱՄՆԵՐԻ ԿՅՅՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԿՆՆՈՒՄՆԵՐԻ 1950-53թթ. բաղկացած է երկու ենթաբաժիններից և վերլուծում է Իրանում այդ ժամանակաշրջանի բուռն իրադարձությունները:

Առաջին ենթաբաժինը վերնագրված է «ԱՄՆ-ի ֆինանսական օգնությունը Իրանին՝ որպես իրանա-ամերիկյան հարաբերությունների կարևորագույն գործոն»: Առաջին ենթաբաժնում զետեղված են այդ ժամանակաշրջանում Միացյալ Նահանգների կողմից Իրանին հատկացրած ֆինանսական, տնտեսական, ռազմական օգնությունների փաստերը: Այդ օգնության միջոցով փորձ կատարվեց իրականացնելու Իրանի զարգացման 7-ամյա ծրագիրը:

1950թ. Միացյալ Նահանգները սկսեց իր ռազմական օգնության ծրագիրը, և այդ կապակցությամբ հիմնվեց Ռազմական խորհրդատուների օգնության խումբը, որն առավել հայտնի է ՄԱԳ հապավմամբ: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի ցուցաբերած օգնության շնորհիվ Իրանի բանակում զինվորականների թիվը կրկնապատկվեց: Եթե 1946թ. Իրանի բանակում զինվորների թիվը կազմում էր 65.000, ապա հինգ տարի անց այն հասավ 123.000-ի, որից 8.000-ը սպաներ էին: Օղային ուժերի թիվը ևս աճեց՝ 1400-ից հասնելով մինչև 3.300-ի, իսկ ծովայինը՝ 440-ից՝ 1200 միավորի:

1950թ. հոկտեմբերի 19-ի համաձայնագրով գյուղատնտեսության զարգացման նպատակով Իրանին հատկացրած օգնությունը նպատակ ունեւր «քարձրացնել բնակչության կենսամակարդակը և գյուղացիների աշխատանքային արտադրողականությունը»: Այդ նպատակների իրականացման համար ԱՄՆ-ը հատկացրեց 500.000 մլն դոլար, իսկ Իրանը՝ հողատարածք, աշխատուժ, սարքավորումներ և «տարեկան ոչ պակաս քան 3,2 մլն դիալ՝ ընթացիկ ծախսերի համար»: Հասկանալի է, որ օգնության այդ չափը բավարար չէր հոգալու երկրի ոչ տնտեսական, ոչ էլ սոցիալական խնդիրները: Համաձայնագրի չորրորդ հոդվածով ԱՄՆ-ի կառավարությունը կրթության, առողջապահության և գյուղատնտեսության բնագավառներում օգնությունը կազմակերպելու համար նշանակում էր հրահանգիչներ՝ նպատակ ունեւնալով ապահովել տեխնիկական և վարչական աշխատանքների ղեկավարումը առանձին օրինակելի կենտրոններում: Այդ կենտրոններին մակ մատակարարվում էին սարքավորումներ ու տեխնիկական միջոցներ, որոնք Իրանում չկային: Այսպես կոչված «բարեկարգված օրինակելի 10 կենտրոններից» 7-ը նախատեսվում էր ստեղծել Ատրպատականում՝ Խորհրդային Միության սահմանների մոտ:

Սակայն, ինչպես Իրանի կառավարությունը, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր այն երկրները, որոնք Միացյալ Նահանգներից օգնություն էին ստանում, իրավասու չէին այդ գումարները ծախսել իրենց երկրի այլ կարիքները հոգալու համար: Նման առաքելությունը իրականացնում էին միայն ամերիկացիները: Այդ նպատակով ստեղծվում են ամերիկյան առաքելություններ, որոնք էլ որոշում են «օգնության» ֆոնդի միջոցների ծախսման եղանակը:

Այդ օգնությունների միջոցով փորձ կատարվեց իրականացնելու Իրանի զարգացման 7-ամյա ծրագիրը: 1952թ. հունվարին Թեհրանում ստորագրվեց տեխնիկական համագործակցության

մասին ամերիկա-իրանական համաձայնագիր, որի համաձայն ԱՄՆ-ն Իրանին 1952թ. հատկացրեց 23 մլն. դոլար:

Երկրորդ ենթաբաժնի լը՝ «Միացյալ Նահանգների դիրքորոշումը անգլո-իրանական նավթային վեճի ժամանակ» ներկայացնում է Իրանի նավթի շուրջ առաջացած լարվածությունը, համաձայնության հասնելու ուղիները և վերջնական պայմանագիրը:

Մեծ Բրիտանիան 20-րդ դարի սկզբներին Իրանի տարածքում ստեղծեց Անգլո-իրանական նավթային ընկերությունը (ԱԻՆԸ): Շահագործելով Իրանի նավթը, միևնույն ժամանակ ԱԻՆԸ քերամում էր իրականացնել իր պարտավորությունները: Համաձայն 1933թ. պայմանագրի ԱԻՆԸ պետք է բարձրացներ աշխատողների աշխատավարձը, իրանցիներին հատկացներ պատասխանատու պաշտոններ և այլն: Սակայն պայմանագիրը չգործեց, իսկ 40-ականների վերջին և 50-ականների սկզբին Իրանի ժողովուրդը ոտքի կանգնեց՝ պահանջելով ազգայնացնել Իրանի նավթը:

Այդ ժամանակ միջնորդական առաքելությամբ հանդես եկավ Միացյալ Նահանգները: Հարկ է նշել, որ այդ լարվածությունը ձեռնառու էր ԱՄՆ-ին, չէ որ Մերձավոր Արևելքի ամերիկյան ընկերությունները բավականին օգտվեցին ԱԻՆԸ-ի անհաջողություններից: Իրանի նավթի արտահանման դադարեցման պատճառով առաջացած վակուումից օգտվելով՝ ԱՐԱՄԻՕ-ն Մաուրյան Արաբիայում մեծացրեց նավթի տարեկան արդյունահանումը՝ 200 մլն բարելից հասցնելով 300 միլիոնի, իսկ Քուվեյթում՝ 128-ից մինչև 273 մլն բարելի: Սակայն, մյուս կողմից, Աբադանի նավթավերամշակման գործարանի փակման պատճառով Իրանում առաջացած վակուումը իրական սպառնալիք էր մակ միջազգային կարտելին:

Միացյալ Նահանգները ստիպված էին համագործակցել Անգլիայի հետ, քանզի 1951թ. մայիսի 7-ին Մոսադեղի կառավարությունը Մեջլիսում վստահության քվե ստանալուց հետո, որոշեց Բահրեյնի նավթը ևս ազգայնացնել, քանի որ, գտնում էին՝ այդ տարածքը Իրանի մի մասն էր, իսկ Բահրեյնի նավթի նկատմամբ հավակնություն ուներ ԱՄՆ-ը: Այսպիսի իրավիճակում Լոնդոնը և Վաշինգտոնը փնտրում էին այլ եղանակներ՝ նավթարդյունաբերության մեջ իրենց խաբլիված դիրքերը Իրանում և Բահրեյնում ամրապնդելու համար: Ահա այս պայմաններում ԱՄՆ-ը և Անգլիան հանդես եկան միասնական ճակատով: Իրանի նավթի հարցում Միացյալ Նահանգները չէր կարող անտարբեր լինել Անգլիայի տեսակետի նկատմամբ, քանի որ դրանով կվտանգեր իր սեփական նավթային կոնցեսիան Միջին Արևելքում: Չէր կարող կորցնել մակ Մեծ Բրիտանիայի բարեկամությունը, մանավանդ, երբ անհրաժեշտ էր առավելագույն միասնականություն ցուցաբերել՝ Կորեական հարցի ժամանակ: Չմոռանալով մակ, որ նոր էր ստեղծվել ՆԱՏՕ-ն և Անգլիան ԱՄՆ-ին հասկացնել էր տալիս, որ եթե Իրանի նավթի խնդրի ժամանակ Միացյալ Նահանգներն աջակցի Թեհրանին, ապա Լոնդոնը կվերանայի ՆԱՏՕ-ում իր անդամակցության հարցը:

1951թ. ԱՄՆ-ի կառավարությունն օգտվեց ԱԻՆԸ-ի հետ կապված տարածայնություններից և միջատեց սույն խնդրին: Բանակցությունների ընթացքում արդյունքի չհասնելով՝ Անգլիան փորձեց ահաբեկել Իրանի կառավարությանը և նույնիսկ Իրանի ափերին մոտեցրեց իր ռազմական նավերը՝ ակնկալելով ԱՄՆ-ի հավանությունը և աջակցությունը: Սակայն ԱՄՆ-ը չպաշտպանեց Անգլիայի գործողությունները:

1951թ. հուլիսի 15-ին Թեհրան ժամանեց նախագահի հատուկ ներկայացուցիչ Ավերիլ Հարիմանը: Բանակցությունների ժամանակ խոսքը գնում էր ԱԻՆԸ-ի ձեռնարկությունները զուտ անվանական ձևով Իրանին հանձնելու վերաբերյալ: Նավթի հետազոտման և արդյունահանման աշխատանքները, նավթի գտածոն և վաճառքը պետք է անցնեին կազմակերպության ձեռքը, որտեղ գլխավոր գերակատալություն էին ունենալու ամերիկյան ընկերությունները՝ ի թիվս «Մտանդարտ Օյլ օֆ Նյու-Ջերսիի» կամ «ԱԲԱՄԿՕ»-ի: Միևնույն ժամանակ Միացյալ Նահանգները Իրանին խստացավ փոխառություն, առաջարկեց անգլիացիների փոխարեն ուղարկել իրենց մասնագետներին: Հետագայում պարզվեց, որ բացի նավթի հարցից Հարիմանը բանակցություններ էր վարում նաև տնտեսական այլ հարցերի շուրջ՝ փորձելով ավելի ուժեղացնել Միացյալ Նահանգների ազդեցությունը Իրանում՝ ի հաշիվ Անգլիայի: Սակայն Հարիմանի այնքա՞նչ չտվեց:

Այս ամենից հետո Մեծ Բրիտանիան որոշեց դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ խնդրելով ազդել Իրանի վրա: Խորհրդային Միությունը, Հնդկաստանը և Հարավսլավիան Անվտանգության խորհրդում հանդես եկան Իրանի պաշտպանությամբ:

Նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի 7-րդ կետի համաձայն՝ Իրանը նավթ պետք է վաճառեր միայն արևմտյան երկրներին: Սակայն քանի որ այդ երկրները բոյկոտում էին իրանական նավթը, ինչը հարվածում էր երկրի տնտեսությանը, 1951թ. դեկտեմբերի 12-ին Իրանի կառավարությունը որոշեց, որ եթե 10 օրվա ընթացքում ԱԻՆԸ-ի նախկին սպառողները չցանկանան գնել իրանական նավթը, ապա Իրանի կառավարությունը իրավասու կլինի վաճառել այն ցանկացած գնորդի: Այդ որոշման դեմ անմիջապես արձագանքեց ԱՄՆ-ը:

1952թ. ԱՄՆ-ում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո Վաշինգտոնի դիրքորոշումը Իրանի նավթի հարցի կապակցությամբ կտրուկ փոխվեց: Նորընտիր նախագահ Դ.Դ.Էյզենհաուերը, կտրուկ շրջադարձ կատարելով և հրաժարվելով նախկին վարչակազմի քաղաքականությունից, որոշեց աջակցել ամերիկյան նավթարդյունաբերողներին:

ԱՄՆ-ի քաղաքականության մեջ այսպիսի կտրուկ շրջադարձը կարելի է բացատրել մի հանգամանքով. Սպիտակ տանը դեմոկրատներին փոխարինելու էին գալիս հանրապետականները, իսկ նրանց հետևում ավանդաբար կանգնած էին խոշոր նավթարդյունաբերական ընկերությունները: Բնականաբար, նախագահ ընտրվելուց հետո, Էյզենհաուերը պետք է պաշտպաներ նավթարդյունաբերողների շահերը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում:

1954թ. ապրիլի սկզբներին Թեհրան ժամանեց Միջազգային նավթային կարտելի պատգամավորությունը՝ «Մտանդարտ օյլ օֆ Նյու-Ջերսիի» ներկայացուցիչ Օ.Հարդենի գլխավորությամբ: Ապրիլին Թեհրանում սկսած բանակցությունների ժամանակ Հերբերտ Հուվեր կրտսերը և անգլիայի դեսպան Ռոջեր Սթիվենսը հանդես եկան դիտորդի կարգավիճակով: 1954թ. ապրիլի 10-ին կնքվեց համաձայնագիր Իրանի նավթային շրջանները հետազոտող Միջազգային կոնսորցիում ստեղծելու վերաբերյալ:

1954թ. օգոստոսի 5-ին Թեհրանում և Լոնդոնում տպագրվեցին պաշտոնական հայտարարություններ, որոնք հստակեցնում էին նավթի հետ կապված նոր պայմանագրի կետերը: Նոր պայմանագիրը ուժի մեջ էր մնալու մինչև 1979թ., ցամաքային դեպքում այն կարող էին երկարացնել մինչև 1994թ.: Նավթի արտահանման մեծաչափով պատկանելու էր կոնցեսիան:

Իրանի կառավարությունը հրաժարվեց արտադրական գործողությունների ուղղակի վերահսկողությունից և համաձայնվեց այն հանձնել կոնսորցիումին: Այն, ինչ այժմ Մեծ Բրիտանիան առաջարկում էր Իրանին, ավելի քիչ էր, քան առաջարկում էր ԱԻՆԸ 1951թ. ամառային անվտանգության բանակցությունների ժամանակ:

Այս կոնսորցիումում ԱԻՆԸ-ի մասնաբաժինը կազմում էր 40% (որպեսզի խուսափի ավերորդ շահարկումներից, 1955թ. դեկտեմբերից կոչվեց Բրիտանական նավթային ընկերություն), «Ռոյալ Գազ Շելլ»-ը ստացավ 14%, 40%-ը անցավ ամերիկյան 5 ընկերություններին՝ «Գալֆ Օյլ Բորդերս», «Մորոնի-Լակոմ Օյլ Բորդերս», «Մտանդարտ Օյլ Բոնիվերնի (Նյու Ջերսի)», «Մտանդարտ Օյլ Բոնիվերնի օֆ Բալթիկորնի» և «Թեխաս Բոնիվերնի»,- յուրաքանչյուրն ուներ 8 % և «Բոնիվերնի ֆրանսեզ դե փեթրոլ»-ին 6%: Որպես ԱԻՆԸ-ի իրավահաջորդ՝ բրիտանական նավթային ընկերությունը վերը նշված ընկերություններին հանձնած 60% արժեթղթերի դիմաց ստացան 600 մլն դոլար: Նախատեսվում էր վճարումը կատարել՝ արտահանվող նավթի յուրաքանչյուր բարեկից գանձելով 10 ցենտ:

Իրանում Անգլիայի նավթային մասնագետներին փոխարինելու եկան ԱՄՆ-ի «մասնագետները», որոնց ներկայությունը հնարավորություն էր ստեղծում հարկ եղած դեպքում միջամտելու Իրանի ներքին գործերին և ազդեցության հավելյալ լծակներ ձեռք բերելու այդ երկրի տնտեսության և քաղաքականության վրա:

Իրանի Ազգային նավթային ընկերությունը ձևակառուցում հայտարարվեց բոլոր հանքավայրերի և ողջ ունեցվածքի սեփականատեր:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ ԻԲԱՆԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1953-1960թթ. բաղկացած է երեք ենթաբաժիններից:

Առաջին ենթաբաժինը՝ «1953թ. օգոստոսին Իրանում տեղի ունեցած «Այաքս» գործողությունը» վերաբերում է Միացյալ Նահանգների կողմից աջակցած հեղաշրջումը: «Այաքս» գործողության փաստեր միայն այսօր են բացահայտվում և հնարավորություն տալիս առավել լիարժեք պատկերացում կազմել: «Այաքս» գործողությունը լուսաբանելիս օգտագործել ենք հեղաշրջման անմիջական մասնակիցների և իրականացնողների աշխատությունները և հուշերը:

Գործողությունը ծրագրավորվել էր ԿՀՎ-ի տնօրեն Ա.Գալլեսի անմիջական մասնակցությամբ, և դրա մասին տեղյակ էին, ինչպես ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ.Ֆ.Գալլեսը, այնպես էլ նախագահ Դ.Էյզենհաուերը, սակայն գործողության ձախողման դեպքում նրանք պետք է հայտարարեն իրենց ամենաանտարկային մասին: Գործողության իրականացման համար համագործակցում էին ամերիկյան և բրիտանական հետախուզության աշխատողները: Գործնականում հեղաշրջումը նախապատրաստեց Մերձավոր և Միջին Արևելքում ԿՀՎ-ի սեզիլենտ՝ Քերմիտ (Կիմ) Ռուզվելտը, որին աջակցում էին ԱՄՆ-ի դեսպանատան 5 աշխատակիցներ, որոնք ԿՀՎ-ի ներկայացուցիչներն էին, և 7 իրանցիներ, որոնցից երկուսը Իրանի հետախուզության բարձրաստիճան պաշտոնյաներ էին: Այդ գործում նրան օգնում էին նաև Իրանի արքունիքը և պաշտոնաթող սպայակոյտը՝ գեներալ Ֆազլուլահ Չահեդիի գլխավորությամբ:

Օգոստոսի 19-ին, ամերիկյան զենքով, բեռնատարներով և տանկերով զինված, գեներալ Չահեդիի զորամասերը մտան Թեհրան: Շահին հավատարիմ իրանական զինվորականությունը ԿՀՎ-ի աշխատակիցների հրահանգով գրավեց Թեհրանի ռադիոկայանը, գրոհեց



նախարարությունների շենքերի վրա: Շուրջ 9 ժամ մարտեր ընթացան շահի և Մոսադեղի կողմնակիցների միջև: Ի վերջո հաղթեցին Ջահեղի կողմնակիցները: Շահը, որը մինչև հեղաշրջումը հեռացել էր երկրից, օգոստոսի 19-ին ԲիԲիՍի լրատվամիջոցի տեղեկանաթղթով Ջահեղի հաղթանակի մասին, Բրիտանական ավիատղիների միջոցով օգոստոսի 22-ին վերադարձավ Իրան: Թագուհի Սորայան ոլորեց առժամանակ մնալ Հռոմում:

Հարկ է նշել, որ «Այաթս» գործողության կազմակերպման ծախսերի մասին գրականության մեջ հանդիպում ենք իրարամերձ տվյալների: «Այաթս» գործողությունը, ըստ անգլիական աղբյուրների, արժեցավ 100.000 - 200.000 դոլար: Իսկ այլ տվյալներով՝ այն միայն ԱՄՆ-ի վրա մտեց ավելի քան 10 մլն դոլար: 1961թ. հունիսի 24-ին «Նեյշըն» լրագիրը հետաքրքիր փաստ ներկայացրեց Իրանում կազմակերպված հեղաշրջման վերաբերյալ, ըստ որի՝ ամերիկյան վարչակազմը չզրկեցավ մեծ գումարներ և զենք մատակարարել՝ հեղաշրջումն իրականացնելու համար: Միայն Ա.Վալլեսի գերատեսչությունը Իրանի բանակի սպաներին ու պետական պաշտոնյաներին կաշառելու և Մոսադեղի դեմ քարոզչություն ծավալելու համար հատկացրեց 19 մլն դոլար: Գեներալ Ն.Շվաբգկոպֆի համար բանկում բացվեց անսահմանափակ վարկ:

Հեշտությամբ իրագործված այս հեղաշրջումը կարելի է մեկնաբանել երկու փաստարկներով. Ազգային ճակատում ավանդական և միջին խավի միջև տեսակետների տարածայնությունների խորացմամբ և քաղաքային վարչակազմի ու զինվորական կորպուսի հարաբերությունների սրմամբ: «Այաթս» գործողության շնորհիվ Միացյալ Նահանգները երկու նշանակալի ձեռքբերում ունեցավ: Առաջին՝ 1950-ական թվականներին մեծացավ Իրանի կախվածությունը ԱՄՆ-ից, ավելին՝ այն մերձեցավ Արևմուտքի հետ: Երկրորդ՝ անգլո-ռուսական ավանդական մրցակցությունը փոխարինվեց ամերիկա-խորհրդային մրցակցությամբ:

Մոսադեղի կառավարության տապալումից հետո Իրանի հետ առևտրի դռները բացվեցին ամերիկյան կապիտալի առջև: 1955թ. օգոստոսի 15-ին Իրանը ԱՄՆ-ի հետ կնքեց բարեկամության պայմանագիր, որի համաձայն՝ Իրանի կառավարությունն ամերիկյան ընկերություններին և անհատ անձանց լայն իրավունքներ հատկացրեց՝ Իրանում առևտրային գործունեության և ձեռներեցության ծավալման համար:

Երկար ժամանակ ԱՄՆ-ը հեքքում էր հիշյալ գործողությանը մասնակցելու մեղադրանքները: Միայն 1976թ. ԱՄՆ-ի հետախուզական մարմինների գործերի հետաքննությամբ զբաղվող՝ Մենատի հատուկ հանձնաժողովը պաշտոնապես հաստատեց, որ ԱՄՆ-ը միջամտել էր Իրանի ներքին գործերին: 1953թ. հեղաշրջումից հետո, երբ Մոսադեղը հեռացվեց իշխանությունից, Իրանում ամերիկյան շահերը իրականացնելու և իրենց ազդեցության ոլորտները մեծացնելու համար բացվեց գործունեության աննախադեպ լայն դաշտ:

Երկրորդ ենթազույգված՝ «Իրանի անդամակցումը ԱՄՆ-ի կողմից ստեղծված կազմակերպություններին» վերլուծում է, թե ինչպես Միացյալ Նահանգների ջանքերով ստեղծվեց Բաղդադի պակտը, ներկայացվում է դրա ստեղծման պատմությունը, և ամենակարևորը, թե ինչպես Իրանն անդամակցեց պակտին:

ԱՄՆ-ը դիմում էր բոլոր միջոցներին, որպեսզի ստեղծեն ռազմական բյուր, որի մեջ ցանկանում էր տեսնել Խորհրդային Միության հարևան երկրներին՝ Իրաքին, Թուրքիային, Իրանին, որն, ի դեպ, ամենաերկար սահմանն ուներ ԽՍՀՄ-ի հետ, Աֆղանստանին,

Պակիստանին: Մասնակից երկրներին խոստանում էին նորանոր տնտեսական և ռազմական օգնություն, վարկեր, ընդդիմացողներին սպառնում էին զրկել այդ օգնությունից: Անդամակցելու պայմանում Միացյալ Նահանգները ֆինանսական մեծ օգնություն խոստացան Իրանին: Թեև Իրանն էլ հույս ուներ անդամակցելով պակտին լուծել մի շարք խնդիրներ, որ իր ուժերից վեր էր: Հիմնական խնդիրը դա Բահրեյնը հետ ստանալու ցանկությունն էր, որին ամեն կերպ խոչընդոտում էր Անգլիան: Ի վերջո Միացյալ Նահանգները հասան իրենց նպատակին, և 1955թ. նոյեմբերին Իրանը միացավ Բաղդադի պակտին: Պակտի անդամ երկրները՝ Անգլիան, Իրաքը, Թուրքիան, Իրանը, ցանկանում էին ԱՄՆ-ին տեսնել պակտի կազմում, սակայն Միացյալ Նահանգները չցանկացավ սրել հարաբերություններն արաբական երկրների հետ և հրաժարվեց միաժամ բրկին: 1956թ. ապրիլին Միացյալ Նահանգները միացավ պակտի տնտեսական և քայքայիչ գործունեության դեմ պայքարի հանձնաժողովներին:

Բաղդադի պակտին անդամակցելուց հետո Իրանը, Իրաքը, Թուրքիան և Պակիստանը սկսեցին համագործակցել քաղաքականության, տնտեսության և մշակույթի ոլորտներում: Այս պահից սկսած միջազգային հարաբերություններն հիմնական խնդիրների վերաբերյալ Իրանի կառավարության արտաքին քաղաքականության դիրքորոշումը պայմանավորվում էր Բաղդադի պակտի ռազմավարությամբ: Միևնույն ժամանակ պակտի երկրներում մեծացավ ռազմական խորհրդականների թիվը: Հատուկ տեղ էին զբաղեցնում ամերիկյան ռազմական խորհրդականները, որոնք գործում էին Իրանի զինված ուժերի հրամանատարությունում: Նրանց աշխատանքներն անմիջապես անդամակցող գլխավորում էր առաքելության ղեկավարը, որի հսկողության ներքո գործում էր երեք բաժին՝ ցամաքային զորքի, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հետ համագործակցող խմբերի բաժինները: Այսպիսի քաղաքականությամբ ԱՄՆ-ը իր ամբիջական հսկողության տակ էր պահում ոչ միայն Իրանին, այլ նաև դաշնակից մյուս երկու երկրներին՝ Թուրքիայի և Պակիստանի զինված ուժերը:

Բյուրն ներսում կային տարածայնություններ. արևելյան երկրները դժգոհում էին, որ ԱՄՆ-ը չի միանում պակտին, այլ լույս մասնակցում է դրա որոշ կոմիտեների աշխատանքներին: Բացի դրանից, նախարարների խորհրդի բոլոր նստաշրջաններում Իրանը, Թուրքիան և Պակիստանը բարձրացնում էին ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից ռազմատնտեսական օգնության չափերի մեծացման հարցը:

Բաղդադի պակտի ճգնաժամը առավել խորացավ 1958թ. հուլիսի 14-ին՝ Իրաքի հեղափոխությունից հետո, որը մտածելու առիթ տվեց մասնակից բոլոր երկրներին: 1959թ. մարտի 24-ին Իրաքը պաշտոնապես լքեց առանց այն էլ պակտի նվազ շարքերը: Պակտից Իրաքի դուրս գալով՝ կազմակերպությունը, բնականաբար, այլևս չէր կարող կոչվել հին անունով: 1959թ. օգոստոսին Բաղդադի պակտի հիման վրա ստեղծվեց Կենտրոնական դաշինքի կազմակերպությունը (ՄԵՆՏՕ), որի կազմի մեջ մնացին պակտի մեջ մնացած երկրները՝ Թուրքիան, Իրանը, Պակիստանը և Անգլիան, իսկ կենտրոնը Բաղդադից տեղափոխվեց Անկարա:

Սակայն ճիշտ չի լինի հայտարարել, թե պակտի գործունեությունը դադարեց կամ դանդաղեց Իրաքի հեռացմամբ: Հենց այս ժամանակաշրջանում ստեղծվեց և կատարելագործվեց բարձր հաճախականության ռադիո-հեռախոսային-հեռագրային կապ Անկարայի, Թեհրանի, Կարաչիի և Լոնդոնի միջև: Կառուցվեցին օդանավակայաններ և այս ամենն մշտական կապ սպահովեց

անդամակից երկրների միջև: Դեռևս 1957թ. Միացյալ Նահանգներն Իրանին հատկացրեց 2,5 մլն դոլար՝ ավարտված հասցեները համար պղտեմ տասը տարի ձգձգվող Մեխրաբադի օդանավակայանի կառուցումը, որը մինչև օրս հանդիսանում է Իրանի լավագույն օդանավակայաններից մեկը: 1960թ. սկսվեց Թավրիզից մինչև իրանա-բուրքական սահմանը ընթացող երկաթգծի շինարարությունը: ԱՄՆ-ը հատկացրեց 18,3 մլն դոլար՝ Անկարան, Թեհրանը, Կարաչին կապող հիմնական մայրուղիները բարելավելու, ինչպես նաև գերկարճալիք ռադիոտեղեկական ցանց կառուցելու համար Անկարայի, Թեհրանի և Կարաչիի միջև:

Ռազմական համագործակցության բնագավառում 1958թ.-ից սկսած ամեն տարի Թուրքիայում, Իրանում և Պակիստանում անցկացվում էին ռազմածովային, ռազմաօդային համատեղ զորախաղեր՝ Անգլիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Թուրքիայի ու Պակիստանի մասնակցությամբ: Այս զորախաղերը միաժամանակ ուսուցողական նշանակություն ունեին ՄԵՆՏՕ-ի ամրամ երկրների կադրերի համար:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է՝ «1959թ. Իրանա-ամերիկյան ռազմական համաձայնագրի կնքումը», որտեղ հիմնական շեշտը դրվում է Բաղդադի պակտի փլուզումից հետո ՄԵՆՏՕ-ի կազմակերպման գործընթացի և երկկողմ ռազմական պայմանագրի կնքման վրա:

Բաղդադի պակտից Իրաքի հեռանալուց հետո ԱՄՆ-ը վճռեց ռազմական պայմանագիր կնքել պակտի մյուս երկրների հետ: ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Մակեդոնը 1958թ. Թեհրանում բանակցություններ էր վարում իրանա-ամերիկյան երկկողմ նոր ռազմական համաձայնագրի կնքման ուղղությամբ: Բանակցությունները ձգձգվեցին, քանի որ Իրանի կառավարությունը փորձում էր ԱՄՆ-ից ռազմական աջակցություն ստանալ երկրին սպառնացող ցանկացած վտանգի առկայության պարագայում: Ամերիկացիները, լինելով առավել շրջահայաց, ձգտում էին խուսափել շահի վարչակազմի պահպանման համար երաշխիք ստանձնելու պարտականությունից: Նրանց նպատակը մեկն էր. պաշտպանել Իրանը խորհրդային կամ կոմունիստական վտանգից, այլ ոչ թե ամրապնդել շահի դիրքերը:

1958թ. դեկտեմբերին Իրանի կառավարող շրջանները դիմեցին իրենց քաջ հայտնի խուսանավելու քաղաքականությանը Խորհրդային Միության և ԱՄՆ-ի միջև: Իրանի կառավարությունը Խորհրդային Միությանը պաշտոնապես առաջարկեց ստորագրել «Բարեկամության և 20 տարվա չհարձակման» պայմանագիր. տեքստը կազմել էր իրանական կողմը և հանձնվել էր Թեհրանում Խորհրդային Միության դեսպանին:

ԽՍՀՄ-ի կառավարությունը համաձայնվեց բանակցել Իրանի հետ միայն մեկ պայմանով, որ Իրանը չպետք է երրորդ երկրի հետ կնքի ռազմական համաձայնագիր: Չնայած ձեռք բերած համաձայնությանը, Իրանի ղեկավարները շարունակում էին զուգահեռ բանակցություններ վարել ամերիկյան պատվիրակության հետ:

Իրանը ծրագրում էր միաժամանակ բանակցություններ վարել և՛ ԱՄՆ-ի, և՛ Խորհրդային Միության հետ: Հասկանալի է՝ նախընտրելով համաձայնության հասնել Միացյալ Նահանգներին հետ: Մակայն համաձայնության չհասնելու դեպքում Իրանը իր հյուսիսային հարևանի հետ գտնե կունենար «Բարեկամության և 20-տարվա չհարձակման» պայմանագիր:

1959թ. հունվարի 19-ին Իրանի արտգործնախարար Հեքմաբը խորհրդային դեսպանին հայտնեց, որ Խորհրդային Միության հետ չհարձակման պայմանագիր կնքելու դեպքում Իրանը ԱՄՆ-ի հետ չի կնքի ռազմական համաձայնագիր:

1959թ. հունվարի 29-ին Բաղդադի պակտի՝ Կարաչիում տեղի ունեցած նստաշրջանից մեկ օր անց Իրանի կառավարության հրավերով Թեհրան ժամանեց ԽՍՀՄ-ի կառավարության պատվիրակությունը՝ փոխարտգործնախարար Վ.Ս.Սեմյոնովի զխավորությամբ:

Մակայն ԽՍՀՄ-ի հետ պայմանագրի կնքումից առաջ Իրանի կառավարությունը փոխեց իր որոշումը և հայտարարեց, որ անկախ Խորհրդային Միության հետ բանակցությունների արդյունքից՝ Իրանը ռազմական պայմանագիր կկնքի ԱՄՆ-ի հետ:

Ինչևէ, չհասնելով համաձայնության՝ Խորհրդային Միության պատվիրակությունը հետագավ Իրանից: Դրանից հետո երկար ժամանակ Իրանի և ԽՍՀՄ-ի հարաբերությունները բավականին լարված էին: Ի տարբերություն խորհրդա-իրանական անհաջող բանակցությունների՝ ակտիվորեն ընթանում էր ԱՄՆ-ի հետ երկկողմ ռազմական պայմանագրի բանակցությունների գործընթացը:

Ի վերջո իրանա-ամերիկյան երկկողմ ռազմական պայմանագիրը ստորագրվեց Անկարայում 1959թ. մարտի 5-ին: Այս համաձայնագրի ստորագրմամբ ամերիկյան զինված ուժերին իրավունք տրվեց իրենց զորքերն Իրանի տարածք մտցնել «ցանկացած ագրեսիայի» դրսևորման դեպքում: Ռազմական երկկողմ պայմանագրեր կնքվեցին նաև ԱՄՆ-ի և Թուրքիայի, ԱՄՆ-ի և Պակիստանի միջև, որով էլ տարածաշրջանում իսպառ թուլացավ Մեծ Բրիտանիայի ազդեցությունը:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ ամերիկա-իրանական ռազմական համաձայնագրի բանակցությունների ընթացքում ամերիկյան կողմը հայտարարեց, որ իրանական զորքը պետք է գրադվի երկրի ներքին գործերով, իսկ ինչ վերաբերում է Խուզեսթանի և Պարսից ծոցի նավթային շրջանների պաշտպանությանը, ապա այդ խնդիրները կիրականացնեն ամերիկյան զորքերը, քանզի իրանական զորքը ի գոյու չէ լուծելու նման խնդիրներ:

Մեր կարծիքով, Իրանի ներգրավումը ՄԵՆՏՕ-ի պակտի մեջ և ԱՄՆ-ի ու Իրանի միջև երկկողմ ռազմական համաձայնագրի կնքումն ամենակարևոր իրադարձությունն էր իրանա-ամերիկյան հարաբերությունների այս ժամանակահատվածի պատմության մեջ:

1950-60-ականներին ԱՄՆ-ն Իրանի հետ կնքեց մի շարք նոր երկկողմ պայմանագրեր: Երկարացվեցին, նաև կնքվեցին նոր համաձայնագրեր Իրանի ռազմական ուժերում, ոստիկանությունում և ժամդրամերիայում ամերիկյան ռազմական և քաղաքացիական խորհրդակազմների, մասնագետների և խորհրդատուների գործունեության մասին:

Երկկողմ ռազմական պայմանագրերի կնքումով Բաղդադի պակտի գործունեությունը նկատելիորեն ակտիվացավ, ԱՄՆ-ն իր վրա վերցրեց պակտի ղեկավարման առաջնորդությունը, իսկ Անգլիան մղվեց երկրորդ պլան:

Օրեցօր սերտանում էին Միացյալ Նահանգների և Իրանի միջև հարաբերությունները, սակայն այդ ջերմ հարաբերություններն ավարտվեցին Իրանի Իսլամական հեղափոխությամբ, երբ իսլամական անգամ ղիվանագիտական հարաբերությունները:

Եվ չնայած այսօր երկու պետությունների միջև չկան դիվանագիտական հարաբերություններ, միևնույն է, կարելի է վստահությամբ նշել, որ Միացյալ Նահանգների

քաղաքական գործիչները ուշի ուշով հետևում են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական զարգացումներին, քանզի ինչպես Իրանը, այնպես էլ ողջ տարածաշրջանը եղել և մնում է ԱՄՆ-ի շահերի ոլորտում:

ՎԵՐՋՏԱԲԱՆՈՒՄ վերլուծելով 1942-60թթ. իրանա-ամերիկյան հարաբերությունները՝ համոզում ենք այն եզրակացության, որ ԱՄՆ-ը, ի դեմս Իրանի, Միջին Արևելքում գտավ իր կարևոր դաշնակցին, օժանդակեց երկրի զարգացմանը, բանակի հզորացմանը:

ԱՄՆ-ը, որ մինչ Երկրորդ համաշխարհային պատերազմը չուներ էական ազդեցություն Իրանում, հետպատերազմյան շրջանում դիմեց մի շարք միջոցառումների վերականգնելու բացթողումները: Իրանում ԱՄՆ-ի աջակցությամբ բացվեցին բազմաթիվ ամերիկյան տիպի դպրոցներ և ուսումնական այլ հաստատություններ, մեր կարծիքով սա ևս ամերիկյան քաղաքականության դրսևորումն էր քանզի ամերիկյան կրթություն ու նաև դաստիարակություն ստացած ուսանողները սերտորեն կապվեցին ԱՄՆ-ի հետ, իսկ որոշ ժամանակ անց արդեն նախկին ուսանողներից շատերը հայտնվեցին Իրանի կառավարության բարձրագույն պաշտոններում:

Հարկ է նշել, որ Անրապատկանում առաջացած խնդրի ժամանակ, ԱՄՆ-ը Իրանին ցուցաբերեց զգալի աջակցություն, որով շահեց Իրանի համակրանքը: Այս հանգամանքը Միացյալ Նահանգները ևս մեծապես օգտագործեց իր հետագա քաղաքականության իրականացման ժամանակ:

Հետպատերազմյան շրջանում ամերիկյան քաղաքականությունն առավելապես աչքի ընկավ ֆինանսական օգնության ծրագրերով: Սակայն, բացի ֆինանսական և տնտեսական օգնություններից՝ ԱՄՆ-ը հոգ տարավ, որ Իրանի կառավարության բարձրագույն պաշտոններում հայտնվեն ամերիկյան քաղաքացիներ, որոնք էլ, բնականաբար, պաշտպանելու էին ԱՄՆ-ի շահերն Իրանում: Պետք է նշել, որ այդ օգնությունը բավական բանկ արժեցավ Իրանին:

Անգլո-իրանական նավթային վեճի ժամանակ ԱՄՆ-ը հանդես գալով «միջնորդական» առաքելությամբ, իրատեսական իր քաղաքականության շնորհիվ, կարողացավ ձեռք բերել Իրանի «սև ոսկու» 40%-ը: Իրանում իրենց «մասնագետներին» ներկայությունը, հնարավորություն էր ստեղծում հարկ եղած դեպքում միջամտել Իրանի ներքին գործերին և ազդեցության, հավելյալ լծակներ ձեռք բերել այդ երկրի քաղաքական և տնտեսական կյանքի նկատմամբ: Միացյալ Նահանգներն իրեն իրավունք էր վերապահում միջամտել Իրանի ներքին գործերին, որն առավելապես ակնհայտ դարձավ 1953թ.: Միանգամայն ակնհայտ է, որ ԱՄՆ-ը իր վարած քաղաքականությամբ ազդու ներգործություն ունեցավ Իրանի արտաքին քաղաքական կուրսի ձևավորման վրա: Իրանի հարաբերությունները զարգացում էին այդուր հիմնականում այն երկրների հետ, որոնք գտնվում էին ԱՄՆ-ի հովանավորության ներքո կամ համարվում էին նրա զինակիցները: Միացյալ Նահանգներին հակադիր պետությունների հետ Իրանը հիմնականում վարում էր առավել գուսպ քաղաքականություն:

Իրանա-ամերիկյան հարաբերությունները առավել խորացան հատկապես Բաղդադի պակտին Իրանի անդամակցելուց հետո: Մեր կարծիքով, անդամակցելով ԱՄՆ-ի ջանքերով ստեղծված հիշյալ կազմակերպությանը, Իրանն ակնկալում էր լուծել մի շարք խնդիրներ՝ գերտերությունների անմիջական օգնությամբ պաշտպանելու երկրի շահերը կոմունիստական սպառնալիքից,

ապահովելու սահմանների պաշտպանությունը, հետ բերելու երբեմնի կորցրած տարածքները՝ հանձնելու Բահրեյնի և Պակիստանի տարածքում գտնվող Բելուջիսթանի մյուս հատվածի, լուծելու տարիներ շարունակվող Հիւմեհդ գետի ջրի խնդիրը հոգուտ Իրանի, հզորացնելու երկիրը և հաշիվ ամերիկյան ռազմական, տնտեսական, տեխնիկական օգնությունների: Դառնալով Միացյալ Նահանգների դաշնակիցը՝ Իրանը հույս ուներ արտաքին քաղաքականության բոլոր բնագավառներում ստանալ Միացյալ Նահանգների աջակցությունը և հովանավորությունը: Հարկ է նշել, որ Իրանին ցանկալի բոլոր նպատակներն չէին, որ իրականացան:

Խորհրդային գրականության մեջ հաճախ հանդիպում ենք Իրանին ուղղված քննադատական գնահատականների՝ Բաղդադի պակտին, ՄԵՆՏՕ-ին անդամակցելու համար: Սակայն հարկ ենք համարում նշել, որ բացասական բոլոր ազդեցություններով հանդերձ, Իրանը անդամակցելով վերոհիշյալ կազմակերպություններին, այնուհետև կնքելով ռազմական երկկողմանի պայմանագիր, իրեն առավել ապահովված էր գգում: Տարբեր կերպ գնահատելով Իրանի անդամակցումը այս կամ այն կազմակերպությանը՝ պետք է նշել, որ այն բավականին խթանեց իրանական բանակի զարգացումը, արտասահմանում որակավորված իրանցի մասնագետները կարճ ժամանակահատվածում նոր հարթության վրա դրեցին Իրանի բանակը: ԱՄՆ-ի շնորհիվ Իրանի բանակը համարվեց նորագույն տեխնիկայով, կառուցվեցին բազմաթիվ ռազմավարական օբյեկտներ, Միացյալ Նահանգների աջակցությամբ շինարարական լայնամասշտաբ աշխատանքներ սկսվեցին ինչպես ճանապարհաշինության, այնպես էլ օդանավակայանների կառուցման բնագավառում և հեռահաղորդակցության ոլորտում: Ճիշտ է, Իրանն այս ամենին կարող էր հասնել և՛ իր ուժերով, սակայն հայտնի չէ, քե դրա համար որքան ժամանակ և գումար կպահանջվեր: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ այս ամենը Միացյալ Նահանգներն իրականացրան էր իր շահերից ելնելով: Ի ապացույց դրա նշենք, որ 1964թ. Իրանը ԱՄՆ-ի հետ ստորագրեց «փոխըմբռնման հուշագիր», ըստ որի՝ Իրանն աստիճանաբար պետք է գնել միայն ամերիկյան արտադրության զենք:

Իրանի և Միացյալ Նահանգների ջերմ հարաբերությունները վտանգի տակ դրվեցին 1978թ. սեպտեմբերին, երբ հակաշահակյան ցույցերը և երույթները հասան իրենց զագաթնակետին: Արդյունքում 1979թ. հունվարի 16-ին շահ Մոհամեդ Ռեզա Փահլավին ստիպված էր իր ընտանիքով հեռանալ երկրից: 1979թ. ապրիլի 1-ին Իրանը պաշտոնապես հռչակվեց Իսլամական հանրապետություն և Միացյալ Նահանգներից պահանջեց վերադարձնել շահին: Ստանալով մերժում 1979թ. այսթուլս Ռուհոլլա Խոմեյնիի կոչով նոյեմբերի 4-ին 400 իրանցի ուսանողներ, որոնք իրենց կոչում էին «խմամի կուրսի հետևորդ ուսանող-մահմեդականներ», գրոհեցին Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատան վրա, գրավեցին այն և պատանդ վերցրեցին 66 աշխատակիցների: Դեսպանատան գրավումը վերջակետ դրեց երկու երկրների երբեմնի ջերմ հարաբերություններին, որոնց փոխարինելու եկավ խորը ճգնաժամը ու լարվածությունը: Ի պատասխան դեսպանատան գրավմանը, ԱՄՆ-ը սառեցրեց իրանական ավանդները, արգելք դրեց իրանական նավթի վաճառքի վրա:

Նոյեմբերի 9-ին ԱՄՆ-ի նախագահ Ջ.Քարտերը Ազգային անվտանգության գծով խորհրդական Ջ.Բժեզինսկիին հանձնարարեց գաղտնի գործողություն ծավալել Իրանում՝

ղեսպանատան աշխատակիցներին ազատագրելու նպատակով: Սակայն ԱՄՆ-ի մշակած գաղտնի գործողությունը դատապարտվեց անհաջողության:

Շատով Իրանը դուրս եկավ ՄԵՆՏՕ-ի կազմից, միակողմանիորեն լուծարեց իրանա-ամերիկյան «բարեկամության մասին պայմանագիրը» և շեղյալ հայտարարեց 1959թ. իրանա-ամերիկյան երկողմ ռազմական պայմանագիրը:

1981թ հունվարի 18-ին՝ ղեսպանատան գրավումից 444 օր հետո միայն, ԻԻՀ Միացյալ Նահանգներին համձնեց իր քաղաքացիներին: Փոխարենը ԱՄՆ-ը Իրանին խստացրեց էր պաաստեցնել մոտավորապես 15 մլրդ դոլարի իրանական ավանդները: Իսկ մինչ այդ՝ 1980թ. հուլիսին վախճանվել էր շահ Մոհամմեդ Ռեզա Փահլավին և երկխոսությունը ավելի իրատեսական էր թվում: Սակայն պատանդների ազատագրումից հետո Միացյալ Նահանգները չկատարեց իր խոստումները և իրանա-ամերիկյան հարաբերությունները կրկին լարը ճգնաժամի մեջ հայտնվեցին: .

*ԱՏԵՆԱՆՈՒՄԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ*

1. Ամերիկյան օգնություններն Իրանին՝ որպես իրան-ամերիկյան հարաբերությունների կարևորագույն գործոն,- «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XIX, Երևան, 2000, էջ 61-69.
2. ԱՄՆ-ի դիրքորոշումը անգլո-իրանական նավթային վեճի հարցում,- «Արևելք», 2001, էջ 60-69.
3. 1953թ. օգոստոսին Իրանում տեղի ունեցած «Այաքս» գործողության հարցի շուրջ,- «Մերձավոր Արևելք», Երևան, 2002, էջ 120-133.
4. Ամերիկյան օգնություններն Իրանին՝ որպես իրան-ամերիկյան հարաբերությունների կարևորագույն գործոն,- «Երիտասարդ արևելագետների հանրապետական 21-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցման թեզեր», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2000, էջ 14-15:
5. ԱՄՆ-ի դիրքորոշումը անգլո-իրանական նավթային վեճի հարցում,- «Երիտասարդ արևելագետների հանրապետական 22-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցման թեզեր», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001, էջ 20-21:
6. 1953թ. օգոստոսին Իրանում տեղի ունեցած «Այաքս» գործողության հարցի շուրջ,- «Երիտասարդ արևելագետների հանրապետական 23-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցման թեզեր», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2002, էջ 20:
7. Իրանական Այրբեջանի խնդիրը և Միացյալ Նահանգների մտեցումը,- «Երիտասարդ արևելագետների հանրապետական 24-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցման թեզեր», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2003, էջ 18-20:
8. 1959թ. իրանա-ամերիկյան ռազմական համաձայնագիրը,- «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXII, Երևան, 2003, էջ 66-77:

ИСКАНДАРЯН ГОАР МАНВЕЛОВНА  
ИРАНО-АМЕРИКАНСКИЕ ОТНОШЕНИЯ В 1942-60гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-«Всеобщая история»

Защита состоится 25-го сентября 2003г. По адресу: 375019, г. Ереван, просп. Маршала Баграмяна 24г., Институт Востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению ирано-американских отношений в период с 1942г. по 1960г. и факторам, влияющим на их дальнейшее развитие. На протяжении нескольких веков Иран из-за своего геополитического положения находился под пристальным вниманием сверхдержав.

Если в начале 20-го века в Иране наиболее сильное влияние имели Россия и Великобритания, а в 30-ые годы возросло и влияние Германии, то во время II мировой войны место Германии заняли Соединенные Штаты Америки.

Иранцы считали, что США являются той самой «третьей силой», благодаря которой они смогли бы противостоять все возрастающему влиянию Великобритании и тогда уже-Советского Союза. Тем более, что США оказали значительную помощь Ирану в решении вопроса Иранского Азербайджана в пользу Ирана. Престиж Соединенных Штатов особенно возрос после осуществления программы помощи. В течение 1942-60гг. США предоставляли Ирану финансовую, экономическую и военную помощь. С помощью США в Иране осуществлялась 7-летняя программа развития и реконструкции. В результате американской военной помощи, удвоилось количество и возросла боеспособность иранской армии. Благодаря американской помощи в Иране осуществлялись ширококомасштабные строительные работы. Осуществляя программу помощи, США, конечно, прежде всего преследовали собственные цели.

В 1950-х годах шах Мохаммед Реза Пехлеви открыто выражал свою симпатию по отношению к Вашингтону. В свою очередь, США все больше вмешивались во внутренние дела Ирана. Это стало более очевидным во время свержения правительства Мохаммеда Мосаддыка, осуществленного при содействии ЦРУ. Шах, покинувший страну во время переворота, вернувшись к власти, еще больше склонился в сторону Запада. Наилучшим доказательством этого стало присоединение Ирана к Багдадскому пакту (в будущем-СЕНТО) и подписанное в 1959г. двустороннее военное соглашение.

В середине 20-го века, играя роль «посредника» в решении проблем Ирана, США в первую очередь преследовали свою выгоду. Доказательством тому является посредническая роль Соединенных Штатов в решении вопросов Иранского Азербайджана, реки Гильменд и во время англо-иранского нефтяного конфликта. В результате разрешения последнего

конфликта США приобрели 40% акций нефтяной компании, которые до того принадлежали Великобритании.

Благодаря своей прагматической политике, в период с 1942г. по 1960г. США приобрели в Иране значительное влияние за счет Великобритании и Советского Союза.

Вопрос актуальности данной темы непосредственно связан с важностью исследования ключевых проблем новейшей истории, внутренней и внешней политики и экономического развития Ирана-важного внешнеполитического партнера Республики Армения.

Диссертационная работа состоит из введения, трех глав, заключения и библиографии.

Во введении обосновывается актуальность темы исследования, дается обзор источников и литературы, использованных в работе, формулируются цель и задачи данного исследования, описывается структура работы и ее практическое значение.

В первой главе диссертации (Ирано-американские отношения в 1942-50гг.) исследуются зачатки политики проникновения США в Иран, позиция США при решении вопроса Иранского Азербайджана, а также посредническая роль США во время рассмотрения вопроса о водном пространстве реки Гильменд между Афганистаном и Ираном.

Во второй главе диссертации (Ирано-американские отношения в 1950-53гг.) исследуются цели американской финансовой, экономической, военной помощи Ирану и результат подобной политики. Второй подотдел данной главы касается англо-иранского нефтяного конфликта и посреднической роли США в его решении.

В третьей главе диссертации (Ирано-американские отношения в 1953-60гг.) исследуется более активное вмешательство США во внутренние дела Ирана, доказательством чему является операция "Аякс", осуществленная при содействии ЦРУ. Второй подотдел данной главы касается предпосылок и причин присоединения Ирана к Багдадскому пакту и роли США в этом деле. Третий подотдел исследует причины и цели ирано-американского двустороннего военного соглашения, подписанного в марте 1959г.

На основании проведенного исследования в заключении диссертации даны выводы по ключевым рассмотренным вопросам, показано их значение для современной исторической науки.

Работа может способствовать освещению проблем внешнеполитического курса Ирана по отношению к США, основных вопросов политической истории данного периода, а также может быть использована в политологических исследованиях и при разработке аналитических материалов для государственных органов.

GOHAR M. ISKANDARYAN

IRAN-AMERICAN RELATIONS 1942-1960.

